ԶՒԱՐՃԱԼԻՔ

ԳՐԱՒԱԽԱՂ (Ֆանտ *)։

1. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Կազմւում է շրջան։ Խաղը սկսւում է։ Մինչին ընտրում են խաղ ղեկավարող։ Ղեկավարն արտասանում է մեր ներքևում առաջ բերած շուտասելուկներից մէկը, և դիմելով խաղացողներից մէկն ու մէկին՝ խնդրում է արտասանել այդ մի քանի անգամ իրար ետևից, օրինակ՝ 1, 3, 4, 5 և այլն։ Եւ այդ խաղացողն էլ պատրաստ է կրկնել իրան առաջարկածը։ Սխալւողը տանում է տալիս և վճարում է ֆանտ.

1) Շատ խիստ, շատ ցուրտ տարեմուտ։
2) Մի լալ, մի կալ։
3) Եպիսկոպոս-կաթողիկոս. կաթողիկոս-եպիսկոպոս։
4) Համ գամ ու համ լամ. համ լամ ու համ գամ։

---

*) Այսպիսի ֆանտերից 8 հատ մենք առաջարկած ունենք 1898 թւի «Աղբիւրի» վերջին երեք №-ներում։ Սրանք ունեն և գրաւը թափելու միջոցներ, որ մենք կըտանք միւս անգամ այլ ֆանտերի հետ միասին։

5) Տուռ ծառին ծառի ծաղիկ։

6) Գնացի զրուցելու, չիրը ջուրը դրի թրջելու։

7) Մուկը բռնեմ, ձուկը կուլտամ։

8) Բժիշկը բժշկին բժշկում է։

9) Դաբաղ Յակոբ, դաբաղ Յակոբ։

10 Երդմնեցուցչութիւն, երդմնեցուցչութիւն, երդմնեցուցչութիւն։

2. ՍԱՅԼԱԿ

Երբ սկսում է խաղը, մէկը փողհարի պէս հնչեցնում է «տրա-րա-րա́»։ Միւսը հարցնում է «Ի՞նչն է գալիս»՝—«Սայլակը․

— Ո՞րտեղից։

Պատասխանը լինում է մի տեղի անուն, որ պիտի սկսւի Ա․ գրով։

—Ո՞ւր է գնում։

Պատասխանը մի այլ տեղի անուն կրկին Ա-ով սկսող։

—Ի՞նչ է տանում։

Պէտք է պատասխանել այնպիսի բանի անունով, որ կրկին Ա-ով լինի սկսելիս։

Օրինակ «տրա-րա-րա́»։

«Ի՞նչն է գալիս»։—«Սայլակը»․

«Ո՞րտեղից»․—«Ալէքսանդրապոլից»։

«Ո՞ւր է գնում»․—«Աշտարակ»։

«Ի՞նչ է տանում»,—«Աթոռներ»։

Այսպէս մի քանի անգամ։ Ապա խաղը շարունակւում է և կրկնւում են նոյն հարցերը, միայն թէ պատասխանները լինում են Բ․ տառով, յետոյ Գ․ և այլն։ Սխալւողը վճարում է ֆանտ։

Գ. Բ.

Բ. ԲԼՓԻՆ

—

Բարոյական դաստիարակութեան մասին *)

(Ըստ գերմանական մանկավարժ Դիստեսի)

—

Բարոյական դաստիարակութիւնը պէտք է սկսի մանկան կեանքի ամենաառաջին օրերից։ Մանկանը ամենից առաջ օդ է պէտք, բայց թերևս նա օդի այնքան էլ պակասութիւն չզգայ. նոյնը չի կարելի ասել, օրինակ, կերակրի մասին։ Զատ մեծ նշանակութիւն ունի, որ մանկանը, օրինակ, իր ժամանակին կերակրեն, որ կերակուրը ոչ աւելի տան, ոչ էլ պակաս։

Մանկութիւնից սովորելով ամենանախնհրաժեշտ բաներից իրան զրկել, մանուկը ապագայում կարող է ժլատ դառնալ։ Իսկ չափից աւելի կերակուրը նպաստում է ծուլութեան զարգացման։ Պակաս վնաս չեն տալիս խմիչքներն ու քաղցր կերակուրները։ Ըստ կարելոյն պէտք է աշխատել, որ բարձը զգացմունքները գերակշռող հանդիսանան։ Այսպէս հոգեկան կեանքը դուրս կըմղէ զգայնական ցանկութիւնները։ Առանց հոգեկան կեանքի՝ անկարելի են ինքնաճաչութիւնը և ձգտումը դէպի ինքնակատարելագործութիւն։ Ոչ թէ հպարտութիւնը, դեղեցկութիւնը, բարձր ծագումը պէտք է արժանաւորութիւն համարին, այլ աշխատասիրութիւնը, կարգապահութիւնը, մաքրասիրութիւնը, հեռատեսութիւնը և այլն։ Ի հարկէ շատ կարևոր է շրջապատողների օրինակը։ Որովհետև իւրաքանչիւր մանուկ առհասարակ հակուած է նմանելու. այդ պատճառով պէտք է աշխատել, որ այն օրինակները, որոնց մանուկը ձգտում է նմանել, իսկապէս լաւ օրինակներ լինեն. բայց չըպէտք է մանկանը զրկել ազատութիւնից. թողէք նա փորձառութիւն ձեռք բերէ, ճանաչէ ինքն իրան։ Կարելի է նրան յիշեցնել իր աջողուած կամ չըյաջողուած ձեռնարկութիւնների մասին, բայց շատ զգոյշ կերպով, որ պատճառ չըդառնայ ոչ մանկան փոքրոգութեանը, ոչ էլ սնապարծութեանը։ Քանի որ մանուկը դեռ չի կազմել ուղիղ կարծիքներ, դաստիարակը իր ճիշտ կարծիքներով պէտք է օգնութեան հասնի նրան. այդ պատճառով գովասանքն ու հաւանութիւն չըտալը երբեմն շատ նպատակայարմար են։ Բայց պէտք է այնպէս վարել, որ գովասանքը սնափառութիւն չըզարգացնէ, իսկ պախարակելը՝ վը-

---

*) Տես „Աղբիւր“ № 11.

հատութիւն։ Քանի որ մանկան ձգտումները չեն կանոնաւորուել՝ նրանից, ինչ ուղէք, կարող էք դարձնել. եթէ լիակատար վստահութեամբ վերաբերուէք դէպի նա, միշտ նրան կարողութիւն կըտաք ուղիղ ճանապարհով ընթանալու.

Մի քանի դեղեցիկ յատկութիւններ ունենալով մանուկը, իհարկէ, դեռ իդէալ չէ, որովհետև լաւը, ինչպէս և վատը, դեռ չի արմատացել նրա մէջ, բայց չըպէտք է մոռանալ ունակութիւնների ոյժը։ Ինչպէս վատը, այնպէս էլ լաւը յաճախակի կրկնողութեամբ կարող է ունակութիւն դառնալ. ուրեմն պէտք է աշխատել, որ բարոյական ձգտումները յաճախ կրկնուեն։

Ամեն մէկս մեր անձնական որ և է մի արժանաւորութիւնը բախտաւորութիւն ենք համարում մեզ համար, իսկ պակասութիւնը՝ դրժբախտութիւն։ Բայց որովհետև մանուկը՝ արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին ունեցած՝ իր դատողութիւններում երերում է, ուստի հարկաւոր է, որ դաստիարակը ճիշտ գաղափար ունենայ պատի և անպատուութեան մասին և կարողանայ ճիշտ դատողութիւն ունենալ իր սանի պակասութիւնների և արժանաւորութիւնների մասին։ Չըպէտք է աչքից բաց թողնել աշակերտի ընդունակութիւնները, տնային հանգամանքները, ջանասիրութիւնը. պէտք է անհատի մէջ զարդացնել սեպհական պատուարժանութեան զգացմունքը՝ առանց ուշադրութիւն դարձնելու նրա արտաքինի, բարձր ծագման կամ հարստութեան վրայ։ Սանը չըպէտք է անտարբեր վերաբերուի դէպի խելացի մարդկանց հաւանութիւն չըտալը կամ խրախուսանքը, նոյնպէս չըպէտք է, որ նա գրաւուի շրջանների կարծիքներով, որոնք շատ անգամ անհիմն են լինում. բայց պէտք է այնպէս անել, որ նա կարողանայ խելացի և ազնիւ մարդկանց կարծիքները տարբերել հակառակ կարծիքներից։

Մարդկանց յարաբերութիւններից առաջ են գալիս և զարգանում են ընկերսիրութիւն, ատելութիւն, նախանձ, բարեկամութիւն և այլն, բայց եթէ մանուկը սովորել է առանձնացած կեանք վարելու, անտարբեր վերաբերուելու դէպի ուրիշները, սովոր է իրան կուռք համարելու ընտանիքի միւս անդամների համար. եթէ նրանից չեն պահանջում որոշ տեսակի ծառայութիւններ, չեն պահանջում որ նա համակրութեամբ վերաբերուի դէպի մերձաւորը, էլ ինչ զարմանալի բան կըլինի, եթէ նա էգոիստ դառնայ։ Ընկերասիրութիւնը ուրիշ հանգամանքներում էլ առաջ է գալիս։ Ի՞նչ դուրս կըգայ այն երեխայից, որը զուրգուրանք, փաղաքշանք չի տեսնում, մանաւանդ, եթէ վաղ հասակից նրան

ճնշել են, որը սովոր է ինքն իր մասին հոգս քաշելու, քանի որ ուրիշները չեն ուզեցել նրա մասին հոգալու...

Այդպիսի պայմաններում միթէ նա կարող է մերձաւորին սիրել։ Այդ տեսակէտից շատ կարևոր է, թէ ինչպիսի հանգամանքներ և անձնաւորութիւններ են շրջապատում մանկանը։ Պէտք է աշխատել, որ նա սկզբից լաւ մարդկանց հետ ծանօթանայ, որ նա միանգամից կարողանայ սիրել և յարգել մարդկանց։ Մանկան համար ահա այդպիսի անձնաւորութիւններ են՝ հայրը, մայրը, քոյրերը, եղբայրները և այլն։ Լաւ ընտանիքի շնորհիւ՝ մանկան մէջ կարող են զարգանալ ամենաբարձր, ամենավսեմ զգացմունքներ։ Բայց, իհարկէ, չի կարելի սահմանափակուել միայն ընտանիքով։ Երեխան պէտք է հասակակից ընկերներ ունենայ և նրանց էլ բաժին հասէ իր սիրուց, որ յետոյ, երբ հասակն առնէ, կարող լինի իր սէրը և համակրանքը դարձնել դէպի ամբողջ մարդկութիւնը։

Շատ վնասակար է մանուկների համեմատութիւնը միմեանց հետ. նա կարող է յուսահատութեան հասցնել և սնափառութիւն, նախանձ և այլ արատներ զարգացնել։ Եթէ մանուկը պակասութիւններ ունի, պէտք է այդ պակասութիւնները ցոյց տալ հէնց իրան, մանկանը, և ոչ թէ համեմատել նրան ուրիշ երեխայի հետ, որովհետև այդ համեմատութիւնը երկուսին էլ վնասում է։ Որպէս զի երեխաները չարասիրտ և ոխակալ չըլինեն, նպատակայարմար է այսպէս վարուել. հէնց որ նկատում է, որ երեխան դժգոհ է որ և է բանից, չըպէտք է ասել, թէ սա կամ նա, կամ այս ինչ բանն է անախորժութիւն պատճառում նրան, որովհետև դրանից երեխան ոխակալ կըդառնայ. աւելի լաւ է թողնել, որ նա հանդարտի և ապա շարունակել սովորական պարապմունքները։

Բարոյական դաստիարակութեան արդիւնքը ձգտումներից և դիմադրութիւններից բաղկացած կամքն է։

Կամքը ձգտումների և մտապատկերների միութիւն է։ Կամքի բարոյական նշանակութիւնը չափւում է ցանկութիւնների արժանիքով, եթէ միայն այդ ցանկութիւնները ճիշտ են գնահատւում։ Իսկ նրա գործողութիւնը կախւած է առարկաների վրայ ունեցած խելացի հայեացքից և մերձաւոր կամ հեռաւոր միջոցներից (խելք, դրամական միջոցներ, բարեկամներ, առողջութիւն և այլն) նպատակայարմար կերպով օգտւելուց, միջոցներից, որոնք պէտք է մարդու ձեռքով աստիճանաբար կատարելագործւեն։ Կամքի դաստիարակութեան համար անհրաժեշտ են. 1, հոգեկան և ֆիզիքական բոլոր

ուժերի համահաւասար զարգացում. 2, ուղիղ դնահատութեան և զուտ բարոյական հակումների զարգացում. 3, վերջինների յաճախակի արտայայտութիւն և ամեն մի անբարոյական բանից խուսափում. 4, զանազան միջոցներով ուղիղ գաղափարների և կանոնների կազմակերպելը և այն:

Կամքը արտայայտւում է այս կամ այն ազատ վարմունքով, որով դաստիարակը ուսումնասիրում է իր սանին: Պէտք է մանուկներին ազատութիւն տալ, որ նրանք իրանց համար կատարեն այն բոլորը, ինչ որ միայն համապատասխանում է իրանց ուժերին, կատարեն հեշտ յանձնարարութիւններ, օգնեն ուրիշներին և այն. սակայն նրանց չըպիտի թողնել՝ առանց հսկողութեան, այլ պէտք է պահանջել, որ բարեխղճութեամբ կատարեն իրանց ստանձնած աշխատութիւնները: Մանկան առաջին ձգտումները չըպիտի անաջող լինեն. այդ պատճառով էլ պէտք չէ նրան դժուար աշխատութիւններ տալ, որովհետև անաջողութիւնը վատ է ազդում նրա վրայ: Եթէ սանից շատ բան են պահանջում, և նա, որքան էլ աշխատում է, չի կարողանում կատարել այդ պահանջը. եթէ նա ծաղրի է ենթարկւում նրանց կողմից, որոնց համար ուզում էր որև է լաւ բան անել, դուրգուրանք չի տեսնում այն մարդկանց կողմից, որոնց նա սիրում է, այն ժամանակ մանուկը կըլինի անհամարձակ, վախկոտ, ծանկամիտ և այն:

Մանուկների վարքը չի կարող անթերի լինել. պակասութիւնները առաջ են գալիս կամ անկանոն դաստիարակութիւնից, կամ փորձառութեան պակասութիւնից, կամ թէ առարկաների մասին ունեցած սխալ հայեացքներից:

Ստախօսութիւնը, գողութիւնը այն գլխաւոր արատներն են, որոնք վատ հսկողութեան ժամանակ կարող են զարգանալ մանուկների մէջ: Ստախօսութեան մէջ միշտ էլ չի կարելի մեղադրել երեխային, որովհետև մանկական վառ երևակայութիւնը շատ անգամ ստեղծում է այնպիսի բաներ, որոնք իսկապէս տեղի չեն ունեցել. ասենք, որ ծնողներն ու դաստիարակներն էլ շատ անգամ մանուկների մօտ ճշմարտութիւն չեն խօսում: Հէնց որ մի անգամ նկատւում է, որ երեխան սուտ է խօսում, պէտք է նրա խօսքը կտրել և հարկադրել, որ լաւ չիշէ, թէ ինչպէս է եղել, և այն:

Դէպի ուրիշի սեպհականութիւնը ունեցած սէրը մանուկների մէջ աւելի ուշ է երևում՝ քան ստախօսութիւնը, որովհետև մանուկները ընտանիքի մէջ օգտւում են այն բոլոր բաներով, ինչ որ լինում է տանը: Որպէս զի այդ արատը չըզարգանայ մանուկների

մէջ, ծնողները իրանք պէտք է ազնւութեան օրինակ լինեն և թոյլ չըտան, որ երեխաները՝ առանց թոյլտւութեան՝ վերցնեն ուրիշի բաները։

Որովհետև մանուկը ինքնուրոյնութիւն չունէ, այդ պատճառով նա պիտի հնազանդւի ուրիշի կամքին և միևնոյն ժամանակ բարոյական օրէնքների առաջ։ Կոյր հնազանդութիւն չըպիտի լինի։ Դաստիարակը միայն այն ժամանակ պիտի առանց այլ և այլութեան հնազանդեցնէ երեխային, երբ վերջինս ի չարն է գործ դնում իրան տւած ազատութիւնը. դաստիարակի հրամանները պէտք է լինեն կարճ, պարզ և որոշ։ Բացի դրանից՝ դաստիարակը պէտք է այնպիսի դիրք տայ իրան, որ սանը հաւատացած լինի, որ նրա բոլոր պահանջները խելացի և օգտաւէտ են։

Եթէ երեխայի վարքը վատ է, կարելի է դիմել և պատժի, միայն պէտք է իսկոյն իրագործել պատիժը և ոչ թէ յետաձգել մի այլ անգամւայ։ Կարելի է պատժել՝ կամ նրան զրկելով զուրգուրանքից ու վստահութիւնից, կամ յանդիմանութիւն անելով նրան։ Մարմնական պատիժները աննպատակայարմար են, ընդհակառակը՝ նրանք վատ են ազդում երեխաների մտաւոր ընդունակութիւնների և առողջութեան վրայ։

Շատ անգամ ուզում են երեխաներին պարգևատրել լաւ վարքի համար։ Բայց ամենից լաւ պարգևը կարելի է համարել զուրգուրանքն ու խրախուսանքը։ Առհասարակ պէտք է մեծ զգուշութեամբ պարգևատրել երեխաներին, որ նրանց չըվնասել, որ նրանց մէջ չըզարգացնել նախանձ, սնափառութիւն, միայն պարգևի համար աշխատելու ձգտում։ Ընդհանրապէս պէտք է յարմարւել մանկան անհատականութեան հետ, թէ պատժելու և թէ պարգևատրելու ժամանակ։

Ձ. Տ.-Գ.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԳՈՒԹԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Երկրագործական, Դիտական եւ Ճարտարարուեստական պատկերներով

ՏՆՕՐԷՆ ԴՈՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

1901-ի յունուարին լոյս պիտի տեսնէ Գուլթանը հայ և ֆրանսացի մասնագէտերու աշխատակցութեամբ.

Երկար տարիներէ ի վեր մտածուած, ծրագրուած գաղափարի մը մարմնացումը պիտի ըլլայ այս հրատարակութիւնը։

Գուլթանը չի պիտի զբաղի քաղաքական հարցերով, կրօնական խնդիրներով և կուսակցական վէճերով։

ՆՊԱՏԱԿ

Գուլթանի նպատակն է արթնցնել ժողովուրդին մէջ գիտութեանց, հողագործութեան և արուեստներու ճաշակը։

Գուլթանի նպատակն է գործնական դպրոց մը ըլլալ և ժողովուրդին մէջ տարածել մշակութեանց լաւագոյն եղանակները, ճարտարարուեստ կատարելագործութիւնները և գիտական ամենակարևոր նորութիւնները։

Գուլթան պիտի աշխատի համախմբել իր շուրջը աշխարհի չորս կողմը ցրուած հայ-մասնագիտական ոյժերը մշակելու և զարգացնելու համար, արուեստական և հողագործական գրականութիւնը։

ԾՐԱԳԻՐ

Երկրագործութիւն և ճարտարարուեստ։ Հողագործութիւն, մեծ և փոքր մշակութիւն։ Պարտիզպանութիւն, այգեգործութիւն և ծաղկամշակութիւն։ Կենդանաբուժութիւն և անասնաբուժութիւն։ Բուսական և կենդանական ախտաբանութիւն։ Անտառներու մշակութիւն, շերամաբուծութիւն, մեղուաբուծութիւն և հաւաբուծութիւն։

Կաթնատնտեսութիւն և գինեգործութիւն։ Գիւղային, քաղաքային ճարտարապետութիւն և ջրաբաշխութիւն։ Գործիքներ և մեքենաներ։ Արուեստախոխսութիւն, գիւղատնտեսութիւն, օրէնսգիտութիւն և առողջաբանութիւն։ Գիւղական բժիշկն ու դեղատունը։ Հող և ճար.-ական տարրաբանութիւն, բնագիտութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, միտորէաբանութիւն, մետաղաբանութիւն, միքրոպաբանութիւն, տարրալուծութիւն, մեքենագիտութիւն, ջրաբաշխութիւն, մարդակազմութիւն, կենդանախոսութիւն, օրէնսգիտութիւն և այլն։

Առայժմ ամիսը անգամ մը պիտի հրատարակի Գուլթանը և իւրաքանչիւր թիւր պէտք է բաղկանայ 16 էջէ։

Տարեկան բաժնեգինն է բոլոր երկիրներու համար 12 ֆրանք և կանխիկ։

Յօդուած, նամակ և բաժնեգին ղրկել՝ K. Médzadourian.

23 rue de la Calleg'ale Paris

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱՋԻ

հրատարակութիւններ չրսպառուած

Ալբոմ-Ալմանախ, 4 դոյնով 101 պատկեր.	2 »
Իֆիգենեա մեծագիր օլէօգրաֆիա	2 »
Անտիգոնա } Իսմէնա }	2 »
Մ.Ի.ք. Նալբանդեանց.	1 »
Արտաշէս թագաւորի մուտքը Հռոմ.	« 50
Ձմեռ	« 20
Հարեմի աղջիկը ոսկի շղթաներում	« 50

Ամենապտկու վրայ պատկերներ

Վեհափառ Հայրիկ	10 »
Սրբազան Իզմիրլեան	10 »
Գրիգոր Արծրունի	3 »

ԳՐՔԵՐ

Սաֆո	» 50
Յովհ. Թումանեանցի բանաստ.	» 60
Սրինգ, Բնութեան երգեր.	» 60
Վ. Փափազեանցի, Հայ Բոշաների վրաններում	» 50
Ձիրվանզադէ, Մելանիա	» 50
Պ. Պռոշեանցի Եկեղի Մկրտչենց տունը.	» 50
Տէր-Գրիգորեան, Ձէյլս	» 20

ОТКРЫТА ПОДПИСКА

НА 1901 Г.

на издающуюся въ Тифлисѣ политическую и литературную ежедневную газету

НОВОЕ ОБОЗРѢНІЕ

(XVIII ГОДЪ ИЗДАНІЯ)

Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.

Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ чтеніи, **ФОРМАТЪ** газеты съ конца нынѣшнаго года будетъ **УВЕЛИЧЕНЪ**.

УСЛОВІЯ ПОДПИСКИ

съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ 10 руб., на 6 мѣсяцевъ 6 р.

За границу: на годъ—16 р., на полгода - 9 р, на 3 мѣсяца—5 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., на полгода—4 р.

Лица, подписывающіяся на будущій годъ, получаютъ газету въ нынѣшнемъ году безплатно.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа каждаго мѣсяца. Подписка принимается **въ Тифлисѣ, въ конторѣ газеты. Барятинская ул., д. № 8.**

Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться подписчикамъ „Нов. Об.“ съ уступкою 50